

5064



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան



«06» 05 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 055 - 24

Ձեռնարկողը՝

«Արմար գրուպ» ՍՊԸ

ք. Վանաձոր, Տերյան 6-րդ փողոց, 23 բն.

Գործունեությունը՝

Լոռու մարզի Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծ պողոտա
20/2 և 20/3 հասցեներում նախատեսվող
բազմաբնակարան բնակելի համալիրի աշխատանքների
շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական
գնահատման հայտ

ք. Վանաձոր

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 055 - 24

« 06 » Տպիսիս 2024թ.

Լոռու մարզի Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծ պողոտա 20/2 և 20/3 հասցեներում նախատեսվող բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

| | |
|----------------------|--|
| Ձեռնարկող՝ | «Արմար գրուպ» ՍՊԸ |
| Ներկայացված նյութեր՝ | Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ /«Բ» կատեգորիա/ |
| Գտնվելու վայրը՝ | Լոռու մարզ, ք. Վանաձոր |

Ներածական մաս. Բազմաբնակարան բնակելի համալիրի նախագիծը նախատեսվում է իրականացնել Լոռու մարզի Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծ պողոտա 20/2 և 20/3 հասցեներում:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8)-րդ կետի ա) ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեության իրականացման համար հիմք են հանդիսացել պատվիրատուի հայտը, 2023 թվականի հունվարի 25-ին տրված NCPPO-0000-4596 ճարտարապետահատակագծային առաջադրանքը: Նախագծվող բազմաբնակարան բնակելի համալիրի հողատարածքը գտնվում է Վանաձոր քաղաքի հրապարակին հարող՝ շենք շինություններից ազատ տարածքում: Հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 0,32982 և 0,1 հա, որից կառուցապատվում է 2145,0 քմ-ը:

Բնակելի համալիրում նախատեսված են երկու ստորգետնյա հարկ, որոնք պետք է ծառայեն որպես ավտոկայանատեղի և յոթ վերգետնյա հարկ: Առաջին /գրոյական/ հարկը նախատեսված է որպես առևտրա-հասարակական գործունեության համար նախատեսված տարածքներ, իսկ մնացած վեց հարկերը՝ որպես բնակելի: Յուրաքանչյուր հարկում նախատեսված է 15 հատ բնակարան: Բարդ հատակագծային ուրվագծի և ռելիեֆի հետևանքով՝ շենքը սեյսմիկ կարանով բաժանված է երկու առանձին մասերի, որի պատճառով գրոյական հարկի հատակները միմյանցից տարբերվում են 90,0 սմ-ի չափով: Երկու ստորգետնյա հարկերը նախագծված են այնպես, որ պատերազմական իրավիճակների դեպքում կարողանան ծառայել որպես պարզագույն թաքստոց: Այնտեղ նախատեսված են բոլոր անհրաժեշտ ինժեներական կոմունիկացիաները, որոնց առկայությունը պարտադիր է նմանատիպ կառույցներում:



Շենքն ունի երկու առանձին հիմնական շքամուտք, չորս աստիճանավանդակ և չորս վերելակ: Վերելակները և աստիճանավանդակներից երկուսը բարձրանում են դեպի տանիք: Շենքի տանիքը հարթ է և թույլ է տալիս տեղադրել արևային մարտկոցներ:

Համաձայն ընդհանուր թաղամասի կառուցապատման սխեմայի՝ հստակեցված են թաղամասի կառուցապատման գծերը, համաձայն որի, մոտակա կառույցները գտնվում են 6.5-23մ հեռավորության վրա:

Համալիրի տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

- հողամասերի ընդհանուր մակերեսը՝ 4298.2 քմ,
- համալիրի վերգետնյա կառուցապատման մակերեսը՝ 2145 քմ / 49.9 % ,
- կանաչապատման մակերեսը՝ 1096 քմ / 25.5 % ,
- անջրանցիկ մակերեսը՝ 1057.2 քմ 24.6 %/,
- ավտոկայանատեղիների քանակը՝ 92,
- հողամասի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման,
- գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումն իրականացվելու է՝ համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի: Կիրականացվի նաև սիզամարգի ցանքս, կտնկվեն ծառեր և թփեր:

Համալիրի էներգաարդյունավետությունը նախատեսվում է համապատասխանեցնել Կառավարության 12.04.2018թ. N426-Ն որոշմամբ սահմանված չափորոշիչներին, ինչի ուղղությամբ իրականացվելու են համալիր միջոցառումներ, որոնց թվում են երեսպատման համակարգը, բարձր էներգաարդյունավետությամբ պատուհանները և վիտրաժները, տանիքի և ստորգետնյա հարկի ջերմամեկուսացումը: Ջերմության խնայողության համար ընտրված են ջերմաօգտահանիչներով օդի ներածման համակարգեր, որոնք ապահովում են ջերմության բարձր խնայողություն:

Բնակելի շենքի ջրամատակարարումն ու ջրահեռացումն իրականացվելու է համաձայն տեխնիկական պայմանի՝ միանալով «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի ցանցին:

Շինարարության փուլում ջրցանման համար անհրաժեշտ ջուրը կբերվի պայմանագրային հիմունքներով՝ ավտոցիստեռներով, Վանաձոր քաղաքի ոռոգման ջրի ցանցից: Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովվեն՝ տեղադրելով բիոզուգարաններ, խմելու ջուրը կմատակարարվի տարաներով:

Շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում էլեկտրամատակարարումը կիրականացվի համաձայն տեխնիկական պայմանի, որի համար լիցենզավորված կազմակերպության կողմից կիրականացվի նախագիծ:

Համալիրում նախատեսվում է իրականացնել անհատական օդափոխման և ջեռուցման համակարգեր, որոնց արտաքին բլոկները նախատեսվում է քողարկել հատուկ դրանց համար նախատեսված խորշերում և ապահովել աղմուկի ցածր մակարդակ՝ օգտագործելով համապատասխան ձայնամեկուսիչ նյութեր:

Նախատեսվող գործունեության նախագիծը ենթադրում է նաև հիմքերի փորման աշխատանքների իրականացում: Ե/բ հիմքերի տեղադրման համար կատարվելու է մոտ 18000 խմ ընդհանուր ծավալով փորման աշխատանքեր Հանվող 14000 խմ ծավալով զանգվածը կտեղափոխվի Վանաձորի քաղաքապետարանի կողմից օրենքով սահմանված կարգով:



հատկացված վայր, մնացած մասը՝ կարճաժամկետ կապահվի շինարարական հրապարակում և կօգտագործվի որպես հետլիցք:

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնատեսակներն են՝ կենցաղային աղբը /ծածակագիրը՝ 9120040001004/՝ 42,7 տ, որը կհավաքվի աղբահավաք կոնտեյներներում և կտեղափոխվի մոտակա աղբավայր, և 1200 խմ շինարարական աղբը /ծածակագիրը՝ 9120060101004/, ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող (ծածկագիրը՝ 3140110008995) 18000 խմ ծավալով, կտեղափոխվի շինարարության թույլտվությամբ տրամադրված վայր:

Նախատեսվում է շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր, այդ թվում՝

- շինարարական փոշեգոյացնող աշխատանքների ընթացքում իրականացնել ջրցան,
- պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգավորում,
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումն իրականացնել փակ ծածկով մեքենաներով,
- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելի է փոշու տարածումը,
- ջրցանի ծավալները հաշվարկել այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերն ուղղորդել շինարարական հրապարակին կից գտնվող 25 խմ տարողությամբ պարզարան, որտեղ մեխանիկական նստեցումից հետո պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ,
- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք շահագործել տեխնիկական նորմալ վիճակում,
- պարբերաբար ստուգել և կարգավորել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները,
- շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին,
- շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- շինարարական գործընթացներում ներգրավված տեխնիկայից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ, ինչպես նաև ներգրավել ժամանակակից տեխնիկական միջոցներ,
- աշխատանքների ավարտից հետո մաքրել բոլոր տարածքները և առաջացած թափոնները տեղափոխել ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,



Կանաչապատումն իրականացվելու է՝ համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի: Զրոյական նիշում կանաչապատ մակերեսը կազմում է 1096 քմ: Համաձայն նախնական կանաչապատման սխեմայի տնկվելու են՝ Գնդաձև ակացիա – 3 հատ, Ուռենի բաբելոնական – 2 հատ, Թույա – 1 հատ, Գնդաձև թույա – 2 հատ, Յասաման – 2 հատ, վարդեր գետնատարած – 2 հատ, Բոցենի – 20 հատ, Վաղենակ – 15 հատ, Սոխաձաղիկ – 200 հատ(վերջնական ցանկը կհստակեցվի նախագծի հաստատումից հետո):

Նախատեսվող կանաչապատման աշխատանքերի համար կատարել բուսահողի լիցք մոտ 100 խմ, որի ձեռքբերումը, տեղափոխումը և օգտագործումը կիրականացվի գործող օրենսդրության պահանջներին համապատասխան՝ նախապես համաձայնեցվելով Վանաձորի քաղաքապետարանի հետ: Կանաչապատ տարածքների ոռոգումն իրականացվելու է հարևանությամբ անցնող ոռոգման ցանցից: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ շինարարության ժամկետը սահմանված է շինարարության տրամադրումից հետո 1095 օր, նշված հարցը կհստակեցվի մոտ 2 տարի հետո,

Բնակելի շենքի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ ամիսը մեկ անգամ հաճախականությամբ,
- փոշենստեցման նպատակով տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին՝ օրական 2-3 անգամ,
- օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,
- աղմուկի և թրթռումների մակարդակի մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,
- կանաչապատման աշխատանքներ իրականացնող կազմակերպությունը պետք է հետևողական լինի տնկված ծառերի աճի և խնամքի համար, չորացած տեսակները փոխարինի նորերով:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է ամբողջ շինարարարության ընթացքում հատկացնել 2420000 ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. Վանաձոր քաղաքի ղեկավարի նստավայրում, օրենսդրությամբ սահմանված կարգով, իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հանրությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը: Հայտի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ ներքին գործերի, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հայտի լրամշակումներում: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:



Փորձաքննական պահանջներ

- Կառուցապատման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել հայտում ամրագրված բնապահպանական պահանջներին և միջոցառումներին, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր պահպանելով բնապահպանական նորմերը:
- Շինարարական աշխատանքների ընթացքում բացառել թափոնների այրումը: Թափոնների կուտակումն ու հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- Նախատեսվող բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման ընթացքում անհրաժեշտ է պահպանել ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N 15-Ն հրամանով հաստատված «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոնների և նորմերի ինչպես նաև 2002 թվականի մայիսի 6-ի N 138 «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N2 – III – 11.3 սանիտարական նորմերը հաստատելու մասին» հրամանի պահանջները:
- Մինչև նախատեսվող գործունեությունը սկսելն անհրաժեշտ է կատարել հողամասի գործառնական նշանակության փոփոխություն (բնակավայրերի բնակելի կառուցապատման)՝ համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման 24-րդ կետով սահմանված կարգի:
- ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N 438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեքներ ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազոր մարմին՝ համապատասխան պահպանական միջոցառումներ իրականացնելու համար:
- Բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում բետոնի արտադրությունը:
- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող շին աղբի և թափոնների հեռացումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- Կառուցապատման աշխատանքների ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11 հոդվածով սահմանված պահանջներով:

ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ

«Արմար գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Լոռու մարզի Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծ պողոտա 20/2 և 20/3 հասցեներում նախատեսվող բազմաբնակարան բնակելի համալիրի



կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝



Վարդան Հարությունյան